

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վայոց ձորի մարզի պատվիրակության այցը ՌԴ Արխանգելսկի մարզ

2018 թվականի ապրիլի 9-ին Ռուսաստանի Դաշնության Արխանգելսկ քաղաքում ՌԴ Արխանգելսկի մարզի և ՀՀ Վայոց ձորի մարզի միջև ստորագրվեցին միանգամից երկու համաձայնագրեր:

Առաջին համաձայնագրով սկիզբ դրվեց Արխանգելսկ և Ջերմուկ քաղաքների միջև համագործակցության հաստատման: Համաձայնագիրը ստորագրվեց Արխանգելսկի քաղաքապետ Իգոր Գոդզիշի և Ջերմուկի քաղաքապետ Վարդան Հովհաննիսյանի կողմից:

Երկրորդ փաստաթուղթը վերաբերում է „Արխանգելսկ և Վայոց ձոր մարզերի համագործակցության միություն,, ոչ առևտրային կազմակերպության ստեղծմանը: Երկրորդ փաստաթուղթը ստորագրեցին Վարդան Հովհաննիսյանը, Արխանգելսկի մարզի զարգացման կորպորացիայի տնօրեն Ալեքսեյ Կովալյովը և Արխանգելսկի „Ռուսաստանի հայերի միության,, ղեկավար Մամիկոն Գեկչյանը:

Արխանգելսկ և Վայոց ձոր մարզերի միջև միջտարածաշրջանային գործակցություն հաստատվեց, երբ երկու մարզերի իշխանությունների կողմից 2012 թվականին ստորագրվեց համաձայնագիր առևտատնտեսական, գիտատեխնիկական և հումանիտար համագործակցության մասին: 2015 թվականին այդ համաձայնագիրն ամրագրվեց գործողությունների ծրագրի ստորագրմամբ: Համաձայնագրերի ստորագրման հանդիսավոր արարողությանը ներկա էին ՌԴ Արխանգելսկի մարզպետ Իգոր Օրլովը, Արխանգելսկի մարզային և քաղաքային իշխանությունների, Արխանգելսկի մարզի զարգացման կորպորացիայի, ինչպես նաև Արխանգելսկ քաղաքում ՌԴ արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչներ:

Հայաստանի Հանրապետության պատվիրակության կազմում ընդգրկված էին ՀՀ Վայոց ձորի մարզպետի խորհրդական Վասիլ Սալանյանը, Ջերմուկի քաղաքապետ Վարդան Հովհաննիսյանը և „Պրոլայթինգ,,ԲԲԸ-ի գործադիր տնօրեն Ռուբեն Տոնիկյանը:

Արխանգելսկը և Վայոց ձորը առաջիններից էին Ռուսաստանի և Հայաստանի մարզերից, որ 2012 թվականին սկիզբ դրեցին երկկողմանի համագործակցությանը, իսկ հիմա սկսում է զարգանալ նաև համագործակցությունը քաղաքների միջև: Այս համաձայնագրերը պատմական նշանակություն ունեն, որը կնպաստի ռուս-հայկական հարաբերությունների ամրապնդմանը և կդառնա օրինակելի փորձ տարածաշրջանային համագործակցության:

„Արխանգելսկ և Վայոց ձոր մարզերի համագործակցության միություն,, ոչ առևտրային կազմակերպությունը գործարար և առևտրային կապերի զարգացման համար նոր հեռանկարային հնարավորությունների հիմք կհանդիսանա, կմեծանա առևտրաշրջանառությունը Արխանգելսկի և Հայաստանի միջև: Այս նախաձեռնության իրագործման հարցում մեծ է Արխանգելսկի „Ռուսաստանի հայերի միության,, դերը:

Այս միության գործունեության առաջին ծրագրերից կլինեն Արխանգելսկի և Հայաստանի առևտրային ներկայացուցչությունների ստեղծումը: Միության

վերահսկիչ խորհրդի կազմում ընդգրկված կլինեն Արխանգելսկի և Վայոց ձորի մարզպետները:

2018 թվականի ապրիլի 30-ից մայիսի 4-ը Արխանգելսկի մարզի պատվիրակությունը, Արխանգելսկի մարզպետ Իգոր Օրլովի գլխավորությամբ, պաշտոնական այցով գտնվելու է ՀՀ Վայոց ձորի մարզում: Այցի շրջանակներում կանցկացվի „Արխանգելսկ և Վայոց ձոր մարզերի համագործակցության միություն,, ոչ առևտրային կազմակերպությունը վերահսկիչ խորհրդի առաջին նիստը, որի ժամանակ կհասակեցվեն համագործակցության ռազմավարական ուղիությունները:

9-ого Апреля 2018 года в городе Архангельск между Архангельской и Вайоц Дзорской областями были подписаны сразу два соглашения.

Первый документ закрепляет сотрудничество между городами Архангельск и Джермук (Армения), второй гласит о создании некоммерческой организации «Союз сотрудничества Архангельской и Вайоц-Дзорской областей».

Подписи под первым документом поставили глава МО «Город Архангельск» Игорь Годзиш и мэр города Джермук Вардан Оганесян. Под вторым – Вардан Оганесян, генеральный директор Корпорации развития Архангельской области Алексей Ковалёв и руководитель регионального отделения «Союза армян России» Мамикон Гекчян.

В церемонии приняли участие губернатор Архангельской области Игорь Орлов, представители регионального правительства и администрации Архангельска, Корпорации развития Архангельской области, представительства МИД России в Архангельске.

Делегацию Армении, помимо представляли советник губернатора Вайоц-Дзорской области Васил Асланян, мэра города Джермука Вардан Оганесян и генеральный директор ООО «Пролайтинг» Рубен Тоникян.

Поморье и Вайоц-Дзор одними из первых в 2012 году начали развивать двустороннее сотрудничество между регионами России и Армении, а сейчас стартовал и межмуниципальный этап.

Эти соглашения имеют историческое значение, которое может стать ещё одной вехой в истории российско-армянских отношений и примером укрепления межгосударственных связей на региональном и муниципальном уровнях.

Создание НКО «Союз сотрудничества Архангельской и Вайоц-Дзорской областей» открывает перспективы в сфере развития деловых и торговых связей, увеличения товарооборота между Поморьем и Арменией.

В инициативе реализации этой идеи большую роль сыграло региональное отделение общественной организации «Союз армян России».

Одним из первых действий Союза станет создание торговых представительств в Архангельске и Армении. В состав наблюдательного совета Союза войдут губернаторы Архангельской и Вайоц-Дзорской областей.

С 30-ое апреля по 4-ое мая состоится официальный визит делегации Архангельской области в Вайоц Дзорскую область, во главе с губернатором Архангельской области Игоря Орлова. В рамках этого визита состоится первое заседание наблюдательного совета, который определит стратегические направления сотрудничества.